ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«—» ———— 2024թ. **N____ Ն**

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի Ն 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով՝

Երևանի ավագանին որոշում է.

1. Երևանի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի «Երևան քաղաքի ավագանու կանոնակարգը ընդունելու մասին» Ն 1-Ն որոշման հավելվածում (այսուհետ՝ հավելված) կատարել հետևյալ փոփոխությունները.

1) հավելվածի 18-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«18. Ավագանու հերթական նիստի օրակարգի նախագիծը կազմում է Քաղաքապետը հերթական նիստից առնվազն 14 օր առաջ: Օրակարգի նախագծում ներառված բոլոր հարցերը Քաղաքապետի կողմից նշվում են որպես զեկուցվող:»

2) հավելվածի 71-րդ կետի՝

ա. 3) ենթակետում «նախագիծը» բառից հետո հանել «՝ օրակարգային չզեկուցվող հարցերը և զեկուցվող հարցերի քննարկման հաջորդականությունը» բառերը.

բ. 4) ենթակետից հանել «այդ թվում՝ չզեկուցվող հարցերը զեկուցվող հարցերին ներկայացվող ընթացակարգին համաձայն կամ զեկուցվող հարցերը չզեկուցվող հարցերին ներկայացվող ընթացակարգին համաձայն քննարկելու,» բառերը.

գ. 5) ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«5) հերթական նիստի օրակարգի յուրաքանչյուր հարց քվեարկության է դրվում առանձին-առանձին.»

դ. 6) ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«6) հերթական նիստի օրակարգի յուրաքանչյուր հարցի համար քվորումը որոշվում է առանձին-առանձին՝ էլեկտրոնային համակարգի միջոցով գրանցվելով, տասը վայրկյանի ընթացքում, իսկ համակարգը չգործելու դեպքում՝ նիստը վարողի կողմից՝ Քաղաքապետարանի աշխատակազմի օժանդակությամբ: Օրակարգում ընդգրկված մեկ հարցի շուրջ քվորում չապահովելը չի խոչընդոտում դրան հաջորդող հարցերը քննարկելուն և յուրաքանչյուրի մասով քվորումի առկայությունը կամ բացակայությունը պարզելուն.»

ե. 7) ենթակետը շարադրել նոր խմբագրությամբ.

«7) օրակարգում ընդգրկված բոլոր հարցերը քննարկվում են ըստ դրանց ներկայացման հաջորդականության: Քաղաքապետի պահանջով իր ներկայացրած նախագիծը կարող է քննարկվել արտահերթ: Յուրաքանչյուր հարցի քննարկումը սկսվում է նիստը վարողի կողմից հարցի ներկայացմամբ, զեկուցողի անուն-ազգանվան, ինչպես նաև

քննարկվող հարցի վերաբերյալ Հանձնաժողովի եզրակացության (դրական կամ բացասական) հայտարարմամբ.»

3) 74-րդ կետը շարադրել նոր խմբագրությամբ.

«74. Ավագանու արտահերթ նիստերի օրակարգում ներառված հարցերը քննարկվում են սույն կանոնակարգով՝ ավագանու հերթական նիստերի օրակարգի համար նախատեսված ընթացակարգին համապատասխան:»

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

«Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Հայկ Գրիգորյան

ՏԵՂԵԿԱՆՔ – ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2009 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 18-Ի N 1-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Ավագանու նիստի օրակարգում ընդգրկված հարցերը զեկուցվողի և չզեկուցվողի բաժանումը չի արտահայտում ավագանու աշխատանքի ժողովրդավարական ոգին ու պառլամենտարիզմին հարիր չէ: Հարցերի քննարկումը և դրանց հանրային լինելը անհրաժեշտ է նաև իրազեկման տեսանկյունից՝ երևանցիների համար Երևանի քաղաքապետարանի ընդունած որոշումները առավել թափանցիկ, հասկանալի և ընդունելի դարձնելու տեսանկյունից:

Մի քանի հարց մեկ հարցի մեջ ընդգրկելու ներկայիս գործելաոճը թույլ չի տալիս, որ ավագանու անդամը քվերակի և իր դիրքորոշումն արտահայտի այդ հարցերի մասին առանձին-առանձին, ուստի անհրաժեշտ է բացառել մեկից ավելի հարցերի քվեարկություն մեկ հարցի տակ:

Գործող կանոնակարգի համաձայն, եթե օրակարգում ընդգրկված որևէ մեկ հարցի ժամանակ քվորում չի լինում, ապա նիստը վարողը հայտարարում է երեսուն րոպե ընդմիջում, որից հետո, եթե դարձյալ քվորում չի ապահովվում, ապա նիստը համարվում է չկայացած: Յուրաքանչյուր հարցի համար առանձին-առանձին քվորումի ապահովման անհրաժեշտությունը պայմանավորված է նրանով, որ ավագանու անդամը կարող է տվյալ հարցի քննարկման ընթացքում ինչ-ինչ պատճառներով ներկա չգտնվել դահլիճում, սակայն նա ներկա գտնվի մյուս կամ հաջրոդ հարցերի քննարկմանը: Ուստի մեկ հարցի շուրջ քվորումի բացակայությունը չպետք է հանգեցնի նիստի ավարտին և պետք է հնարավորություն տալ շարունակելու օրակարգում ընդգրկված հաջորդ հարցերի քննարկումն ու քվեարկությունը:

Նախագծով առաջարկվող կարգավորումների նպատակն է կանոնակարգել ավագանու նիստում քննարկվող հարցերի ընթացակարգը, նախատեսել կառուցակարգեր, որոնք հնարավորություն կտան խուսափել օրակարգում չզեկուցվող հարցեր ներառելուց և ապահովել ամեն հարցի շուրջ քվերակությունը:

«Երևան քաղաքի ավագանու 2009 թվականի հունիսի 18-ի N 1-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Երևան քաղաքի ավագանու որոշման նախագծի ընդունումը Երևան քաղաքի բյուջեի եկամուտների և ծախսերի ավելացում կամ նվազեցում չի առաջացնում:

«Ազգային առաջընթաց» խմբակցության անդամ Հայկ Գրիգորյան